Բաց կառավարման գործընկերություն ՀԱՅԱՍՏԱՆ

www.ogp.am

ՏԵՂԵԿԱԳԻՐ # 1

դեկտեմբեր 2014

Ինֆորմացիայի ազատության կենտրոն

Բրիտանական դեսպանատուն Երևանում

ԲԿԳ Գործողությունների երկրորդ ծրագիրն իրականացման փուլ է մտել

Բաց կառավարման գործընկերության նախաձեռնության շրջանակներում Հայաստանի գործողությունների երկրորդ ծրագիրը հաստատվեց 2014թ.-ի հուլիսի 31-ին ՀՀ կառավարության նիստում: Այն կազմվել է կառավարության և քաղհասարակության ներկայացրած առաջարկների հիման վրա և ներառում է հանքարդյունաբերության, առողջապահության, կրթության, տեղական ինքնակառավարման, տեղեկատվության ազատության ոլորտները: Ծրագիրը ներառում է 11 պարտավորություն 4 հիմնական խմբերով, որից 7-ը քաղհասարակության առաջարկներն են, իսկ 4-ը՝ կառավարության: Այս պարտավորությունները պետք է իրականացվեն 2014թ.-ի սեպտեմբերից մինչև 2016թ.-ը: Կարդալ >>>

ԲԿԳ Հայաստանի Գործողությունների երկրորդ ծրագիրը

Բաց կառավարման գործընկերությունը ստեղծվել է 2011 թվականին 8 երկրների նախաձեռնությամբ՝ ԱՄՆ, Բրազիլիա, Ինդոնեզիա, Մեքսիկա, Նորվեգիա, Ֆիլիպիններ, Հարավային Աֆրիկա, Միացյալ Թագավորություն: Այսօր արդեն նախաձեռնությանը միացել է 65 երկիր: ԲԿԳ հռչակագրում ասվում է, որ այն նպատակ ունի բարձրացնել կառավարության հրապարակայնությունը, խթանել հասարակության մասնակցությունը հանրային կյանքի կառավարմանը, ձևավորել առավել թափանցիկ և պատասխանատու իշխանություններ:

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

Քաղհասարակությունը համագործակցության նոր փուլ է սկսում

Մասնակիցները պատրաստակամություն հայտնեցին համախմբվել և միասին նախագծերով մշտադիտարկել և գնահատել ԲԿԳ գործողությունների ծրագրի իրականացման ընթացքը:
Կարդալ >>>

Տեղեկատվության ազատության օրենսդրությունը բարեփոխվում է

Կարդալ >>>

ԲԿԳ Գործողությունների երկրորդ ծրագիրը .

Ինչպես է ընթանում Ծրագրի իրականացման ընթացքը, քաղհասարակության դերն ու Կառավարություն-քաղհասարակություն համագործակցության շրջանակները:
Կարդալ >>>

Քաղհասարակությունը համագործակցության նոր փուլ է սկսում

2014 թ.-ի նոյեմբերի 21-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնությամբ և Երևանում Մեծ Բրիտանիայի թագավորության դեսպանատան աջակցությամբ տեղի ունեցավ "Բաց կառավարման նախաձեռնություն-Հայաստան. քաղաքացիական հասարակության համագործակցություն" թեմայով աշխատանքային քննարկումը: Աշխատանքային քննարկման հիմնական նպատակն էր համախմբել քաղհասարակության ուժերը բաց կառավարման գործընկերության ոլորտում: Մասնակից շուրջ 30 ՀԿ ներկայացուցիչներ քննարկեցին ԲԿԳ հայաստանյան գործընթացներում համագործակցության շրջանակները, Գործողությունների երկրորդ ծրագրի պարտավորությունների իրականացման ընթացքը և համատեղ մոնիտորինգի հնարավորությունները: ԻԱԿ-ը ստանձնեց ԲԿԳ քաղաքացիական հասարակության ցանցի ստեղծման և համակարգման աշխատանքները: Այսպիսով, ստեղծվող ցանցի օգնությամբ շահագրգիռ ՀԿ-ները հնարավորություն կունենան առաջին հերթին կարծիքներ, գաղափարներ և տեղեկություններ փոխանակել իրականացվող գործողությունների, նախագծերի վերաբերյալ, այնուհետև առանձին կատարված մշտադիտարկումներն իրականացնել միասնական մշակված մոնիտորինգի մոդելի հիմքով: ԲԿԳ քաղհասարակության ցանցին կարող եք միանալ՝ գրելով ogparmenia@gmail.com էլեկտրոնային հասցեին: Ավելին>>>

«Մենք այն համոզման ենք, որ ԲԿԳ հաջողության և լավագույն արդյունք ապահովելու համար քաղհասարակությունը պետք է միասնական և համակարգված գործի՝ ինչին և միտված է մեր այսօրվա *Դոյդոյան:*

«Գործողությունների ծրագիրը ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունն է, և դրա արդյունավետ իրականացման պատասխանատվությունը կրում է միմիայն Կառավարությունը: ՀԿ-ները կարող են աջակցել և իրենց գնահատականները տալ գործընթացին»,- Լևոն Բարսեղյան:

Տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու անձինք նշանակվել են

Շուրջ 11 տարի՝ ՏԱ ազատության մասին ՀՀ օրենքի ընդունումից ի վեր (2013թ.) պետական գերատեսչություններում լուծված չէր ՏԱ մասին օրենքի 12 -րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները՝ Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին:

ՀՀ Արդարադատության նախարարության նախաձեռնությամբ վերջապես հաստատվել են ՀՀ նախարարություններում և Կառավարությանն առընթեր մարմիններում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձանց ցանկը:

ՏԱ պատասխանատուների ցանկ

ՏԱ օրենսդրությունը բարեփոխվում է

Նոյեմբերի 18-ին ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ քննարկել է «Պետական կառավարման մարմինների, հիմնարկների և կազմակերպությունների կողմից մշակած կամ նրանց առաքված տեղեկատվության գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև տեղեկատվության կամ դրա կրկնօրինակի տրամադրման կարգը սահմանելու մասին» կառավարության որոշման նախագծի դրույթները:

Անդրադարձել են նաև էլեկտրոնային հարցումների իրականացման ընթացակարգին և հարցումների համար գանձվող պետական տուրքի սահմանված չափին, հարցումներին տրվող թերի, ոչ լիարժեք պատասխաններին առնչվող հարցերին: Ըստ ներկաների՝ անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ կատարել օրենսդրական ոլորտում, քանի որ 11 տարի առաջ ընդունված տեղեկատվության ոլորտը կարգավորող օրենսդրությունն արդեն բարեփոխման կարիք ունի: Նախարարի տեղակալը նշել է, որ այդ ուղղությամբ էլ Արդարադատության նախարարությունը պատրաստ է քննարկումներ ծավալել, լսել առաջարկություններ: Ավելին >>>

ՏԱ ենթաօրենսդրական ակտի նախագծի քննարկում

Դեկտեմբերի 11-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ՀՀ արդարադատության նախարարության հետ համատեղ և ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ կազմակերպել էր ՏԱ ենթաօրենսդրական ակտի նախագծի քննարկում, որը վերաբերում է տեղեկատվություն տրամադրելու կարգին և տեղեկությունների պահպանմանն ու դասակարգմանը:

Արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանն ասաց, որ նախագիծը մինչև տարեվերջ կամ հունվարի սկզբին կներկայացնեն կառավարության քննարկմանը: «Նման կարգավորումները կարևոր են քաղաքացիների իրավունքների տեսանկյունից»,- ասաց փոխնախարարը:

Ավելին >>>

ԲԿԳ գործողությունների երկրորդ ծրագրի պարտավորությունները. 2014-2016թթ.

I. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

1. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա տվյալների թվայնացում և հրապարակում,

Լիազոր մարմինը՝ ՀՀ կառավարության աշխատակազմ:
Իրականացնող գերատեսչությունը՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունն է, ֆինանսավորումը՝ ԱՄՆ ՄԶԳ-ից:

Գործողություն	ժամանակացույց
1. Թվայնացնել ֆոնդի առնվազն 15-20%-ը, ստեղծել նաև ինտերնետ կայք և արդեն իսկ թվայնացված տեղեկատվությունը տեղադրել կայքում	2014 դեկտեմբեր 2015 հունիս
2. Ուսումնական աշխատանքներ ֆոնդի համապատասխան 2-4 աշխատակիցների հետ:	2014 դեկտեմբեր 2015 հունիս
3. Թվայնացնել ֆոնդի 100%-ը	2014 դեկտեմբեր 2016 դեկտեմբեր
4. Կկազմակերպվի ծրագրի վերաբերյալ հանրային իրազեկման արշավ, այդ թվում՝ բուկլետների տպագրություն և բաժանում, կայքի շնորհանդես համապատասխան շահագրգիռ մասնակիցներով և այլ միջոցառումներ	2015 հունիս
5. Նոր ստացված երկրաբանական և այլ տեղեկատվության շարունակական թվայնացում	շարունակական

ԲԿԳ Հայաստանի Գործողությունների ծրագիրը իրականացման փուլ է մտել 2014 թվականի հուլիսի 31-ից: Ծրագրով ՀՀ կառավարությունը 2014-2016թթ. ընթացքում ստանձնել է իրա-կանացնել պարտավորություններ՝ ուղղված բաց և հաշվետու կառավարմանը: Ծրագրում ընդգրկված 11 պարտավորությունները ներառված են չորս հիմնական խմբում.

I. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

II. ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

III. ՀԱՆՐԱՅԻՆ ՕՐԻՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

IV. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ:

ԲԿԳ Գործողությունների ծրագրի իրականացման փուլը սկսվել է

2014 թ.-ի նոյեմբերի 6-ին «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ն հարցումներ էր ուղարկել Հայաստանի մի շարք պետական կառույցների՝ պարզելու ԲԿԳ նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Գործողությունների ծրագրով վերջիններիս ստանձնած պարտավորությունների կատարման հետ կապված հարցեր, որոնց մեկնարկը նախանշված է 2014թ.-ի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսները: Նամակներին արձագանքած պետական կառույցները նշել են, որ, ըստ ժամանակացույցի, մեկնարկել է իրենց լիազորության շրջանակներում գտնվող պարտավորությունների հետ կապված գործընթացը և տվել են որոշակի մանրամասներ:

Կարդալ ավելին >>>

2. Հանքարդյունաբերության թափանցիկության ապահովում

Լիազոր մարմինը՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն: Իրականացնող գերատեսչությունները՝ ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն:

Գործողություն	Ժամանակացույց
Արդյունահանող արդյունաբերության թափանցիկության նախաձեռնությանը (EITI) անդամակցելու գործընթացի մեկնարկ, մասնավորապես՝ քննարկումների, բանակցությունների անցկացում և նախապատրաստական այլ անհրաժեշտ աշխատանքների իրականացում:	2014 դեկտեմբեր 2015 հունիս

3. Առողջապահության ֆինանսավորման տեղեկատվության հանրային մատչելիության ապահովում

Լիազոր մարմինը՝ ՀՀ առողջապահության նախարարություն: Իրականացնող գերատեսչությունը՝ ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական առողջապահական գործակալություն:

Գործողություն	Ժամանակացույց
Առողջապահության համակարգի ֆինանսական պորտալի ստեղծում • Հանրային օգտագործման համար ավելի քան 25 հաշվետվություններ • Մասնագիտական շրջաններ՝ շուրջ 1500 օգտվող • Հանրության մասով՝ բոլոր ինտերնետ օգտագործողները	2014 սեպտեմբեր 2015 սեպտեմբեր

Իրականացման ընթացքը՝ Լրագրողներ հանուն ապագայի ՀԿ-ին տրված Առողջապահության նախարարության պատասխանը:

ՀԲ մասնագետի հանդիպումը ՔՀԿ հետ Արդյունահանող արդյունաբերության թափանցիկության նախաձեռնության շրջանակում

2014 թ.-ի հոկտեմբերի 16-ին Համաշխարհային բանկի հանքարդյունաբերության գծով ավագ մասնագետ Գարի Մաք-Մահոնը, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գրասենյակում հանդիպել է քաղհասարակության ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելու ԱԱԹ (EITI) նախաձեռնությունը և ՔՀ դերը դրա խթանման գործընթացներում: Կարդալ >>>

ԱԱԹ նախաձեռնությանը Հայաստանի անդամակցության առաջարկը որպես ԲԿԳ պարտավորություն ստանձնելը ԹԻ գործադիր տնօրեն Վարուժան Հոկտանյանի առաջարկն էր, սակայն Ծրագրի խմբագրումից հետո հաստատվել է ոչ թե ԱԱԹ-ին անդամակցումը, այլ՝ դրան նախապատրաստվելը:

4. ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկության ապահովում

Լիազոր մարմինը՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով: Իրականացնող գերատեսչությունները՝ ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն:

Գործողություն	ժամանակացույց
1. Նախապատրաստել «ՀՀ կառավարության 2012թ. մայիսի 3-ի N 627-Ն որոշման մեջ լրացումներ ու փոփոխությունների կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ	2014 սեպտեմբեր 2014 դեկտեմբեր
2. Նախագիծը քննարկել Արդարադատության և ֆինանսների նախարարություններ հետ	2015 փետրվար 2015 մարտ
3. Նախագծի վերաբերյալ խորհրդատվություն ստանալ քաղհասարակության ներկայացուցիչներից	2015 ապրիլ 2015 մայիս
4. Նախագծի վերջնական տարբերակը ներկայացել ՀՀ կառավարության աշխատակազմ	2015 հունիս 2016 դեկտեմբեր

[ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձաժո-ղովի տրված պատասխանը]

5. Պետական գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակում

Լիազոր մարմինը՝ ՀՀ ֆինանսնեի նախարարություն:
Իրականացնող գերատեսչությունը՝ Գնումների աջակցման կենտրոն:

Գործողություն	ժամանակացույց
1. Բանակցել մասնավոր ընկերությունների հետ, հստակեցնել աշխատանքների շրջանակը	2014 սեպտեմբեր 2014 դեկտեմբեր
2. Մշակել տեխնիկական առաջադրանք և անցկացնել գնումների գործընթաց	2015 հունվար 2015 մարտ
3. Գնումների բողոքարկման խորհրդի նիստերը առցանց հեռարձակվում են www.gnumner.am կայքով:	2015 հունիս շարունակելի

[ՀՀ Ֆինանսների նախարարության պատասխանը]

Որոշման նախագծի հանրային քննարկում

Ի կատարումն ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի թիվ 32 արձանագրային որոշմամբ հաստատված ԲԿԳ գործո-ղությունների ծրագրի 4-րդ պարտավորությանը, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կողմից ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել "Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թ.-ի դեկտեմբերի 15-ի N 1835-Ն և 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1819-Ն որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին" ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Ձեր դիտողություններն ու առաջարկությունները կարող եք ուղարկել ԲԿԳ աշխատանքները համակարգող խմբին՝ nare.danielyan@gov.am էլեկտրոնային փոստին:

[Որոշման նախագիծը >>>]

II. ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

6. Համայնքային միկրոհարցումների ծրագրի ներդրում 10 համայնքներում

Լիազոր մարմինը՝ ՀՀ մարզպետարաններ, ՀՀ:
Իրականացնող գերատեսչությունը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ:

Գործողություն	ժամանակացույց
1. Թվով 10 համայնքներում ներդրվել է «Համայնքային միկրոհարցում» ծրագիրը	2015 փետրվար 2016 հունիս
2. Բոլոր 10 համայնքներում իրականացվել են SMS հարցումներ և արդյունքները հրապարակվել են	2016 հուլիս 2016 դեկտեմբեր

ՀՀ տարածքային կառավարման նախարարության պատասխանը

7. Պետական քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների՝ բաց, թափանցիկ, մասնակցային և հաշվետու գործընթացի ապահովում

Լիազոր մարմինը՝ ՀՀ կառավարության աշխատակազմ
Իրականացնող գերատեսչությունը՝ ՀՀ արդարադատության նախարարություն: “Արազա” բարեգործական ՀԿ-ի հետ համագործակցությամբ:

Գործողություն	ժամանակացույց
1. Իրականացնել աշխատակարգերի և միջազգային փորձի ուսումնասիրություն	2014 սեպտեմբեր 2014 դեկտեմբեր
2. Մշակել իրավական ակտերի/օրինակելի աշխատակարգի փոփոխությունների առաջակները	2015 հունվար 2015 մարտ
3. Իրականացնել հանրային քննարկումներ, հավաքագրել նոր առաջարկներ, լրամշակել առաջարկների փաթեթը և ներկայացնել կառավարության հաստատմանը	2015 ապրիլ 2015 հունիս
4. Իրավական ակտերի/օրինակելի աշխատակարգի փոփոխությունների ընդունում	2015 հուլիս 2016 դեկտեմբեր

ՀՀ արդարադատության նախարարության պատասխանը

ԲԿԳ հայաստանյան Գործողությունների երկրորդ ծրագրի նախագծի հանրային իրազեկում

2014 թվականի մարտ-օգոստոս ամիսներին Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբն իրականացրեց մի ծրագիր, որի նպատակը Հայաստանում Բաց կառավարման գործընկերության գործընթացների հանրային իրազեկումն էր, շահագրգիռ հասարակական կազմակերպությունների և անհատների ներգրավումը ԲԿԳ-Հայաստան 2014-2016թթ. գործողությունների ծրագրի լրամշակմանը, այն՝ հնարավորինս կատարելագործելուն, հարստացնելուն և կառավարական աշխատանքային խմբին ներկայացնելուն:

Ծրագրի մասին >>>

8. Պետական կառավարման մարմինների օրինաստեղծ գործունեության մասին հանրության իրազեկում

Լիազոր մարմինը՝ ՀՀ կառավարության աշխատակազմ
Իրականացնող գերատեսչությունը՝ ՀՀ արդարադատության նախարարություն:

Գործողություն	ժամանակացույց
1. Տեխնիկական լուծումների վերաբերյալ քննարկումների անցկացում, առաջադրանքի ձևավորում	2014 սեպտեմբեր
2. Հրապարակվող նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ իրավական հիմքերի ստեղծում	
3. Գերատեսչությունների պատասխանատու մասնագետների ուսուցման գործընթացի ապահովում	
4. Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակում ստեղծված հարթակում	2016 դեկտեմբեր

III. ՀԱՆՐԱՅԻՆ ՕՐԻՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

9. ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ընտրության կարգում փոփոխությունների կատարում

Լիազոր մարմինը՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարություն
Իրականացնող գերատեսչությունը՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարություն «Վորլդ Վիժն Հայաստան» բարեգործական կազմակերպության հետ համագործակցությամբ:

Գործողություն	ժամանակացույց
1. Աշխատանքային խմբի ստեղծում՝ ՀՀ ԿԳՆ, ինչպես նաև քաղհասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ	2014 սեպտեմբեր 2014 հոկտեմբեր
2. ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ընտրության կարգի լրամշակում	2014 դեկտեմբեր 2015 մարտ
3. ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ընտրության լրամշակված կարգի հաստատում	2015 ապրիլ 2016 դեկտեմբեր

ԲԿԳ գործընթացների մասին իրազեկում մարզերում

«Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ն նոյեմբերի 14-ին և 15-ին ԲԿԳ նախաձեռնությունը ներկայացրեց Գյումրի և Արմավիր քաղաքներում: Մարզային քննարկումները նպատակ ունեն նախաձեռնության մասին իրազեկել տեղի քաղհասարակության ներկայացուցիչներին, լսել Հայաստանի ստանձնած պարտավորությունների վերաբերյալ նրանց մեկնաբանություններն ու առաջարկությունները և դրանք հասցնել շահագրգիռ մարմիններին: Նմանատիպ դասընթաց-քննարկումներ կազմակերպվել են նաև Գորիս և Ալավերդի քաղաքներում: Դասընթաց-քննարկումների շարքը կշարունակվի Գավառ, Վանաձոր և Հրազդան քաղաքներում:

Կարդալ ավելին >>>

IV. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

10. Հանրային ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավում ՏԱ և հակակոռուպցիոն ոլորտում

Լիազոր մարմինը՝ ՀՀ կառավարության աշխատակազմ: Իրականացնող գերատեսչությունը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ քաղծառայության խորհուր՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համատեղ:

Գործողություն	ժամանակացույց
1. Կանցկացվի 10 ուսուցում, կվերապատրաստվեն 200 հանրային ծառայողներ	2015 փետրվար
2. Կլրացվեն 400 հարցաշարեր (200-ը՝ ուսուցման սկզբում, 200-ը՝ վերջում)	
3. Հարցաշարերի հիման վրա կիրականացվի երկու վերլուծություն	2015 դեկտեմբեր

11. Խոշոր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության ապահովում

Լիազոր մարմինը՝ ՀՀ կառավարության աշխատակազմ: Իրականացնող գերատեսչությունները՝ ՀՀ մարզպետարաններ, ՀՀ համայնքներ: Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ-ն կիրականացնի համապատասխան համայնքների պատասխանատու աշխատակիցների հեռարձակման տեխնոլոգիաների ուսուցումը:

Գործողություն	ժամանակացույց
1. Տեխնիկասարքավորումների գնման, եղած կայքերի վերազինման կամ ստեղծման համար միջոցների հայթայթում 20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համար: Գնման գործընթացի ապահովում:	2014 հոկտեմբեր 2015 հուլիս
2. 20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների տեղեկատվական կայքերի ստեղծում:	2015 օգոստոս 2016 մարտ
3. Համայնքների համապատասխան աշխատակիցների համար դասընթացների կազմակերպում:	2015 սեպտեմբեր 2016 փետրվար
4. Կայքերի գործարկում, թիրախ համայնքների ավագանու նիստերի և ՏԻՄ ասուլիսների առցանց հեռարձակում:	2016 ապրիլ շարունակական

Հրապարակվել է ԲԿԳ հայաստանյան գործընթացների մասին ժողովածու

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի նախաձեռնությամբ հրապարակվել է «ԲԿԳ-Հայաստան. Ծրագրի զարգացումները 2012-13 թթ. և 2014-2016 թթ.-ի Գործողությունների ծրագիրը» ժողովածուն: Այն երկլեզու է՝ հայերեն և անգլերեն, և պարունակում ԲԿԳ հայաստանյան գործընթացների մասին մանրամասն տեղեկություն՝ սկսած նախաձեռնությանը Հայաստանի անդամակցությունից՝ 2011 թ.-ի հոկտեմբեր, մինչ 2014 թվականը՝ Գործողությունների երկրորդ ծրագիրը: Այստեղ տեղ են գտել նաև գործընթացում շրջանառված բոլոր փաստաթղթերը:

Կարդալ >>>

Օգտակար հղումներ

Բաց կառավարման գործընկերություն միջազգային նախաձեռնություն >>>

Հայաստանը ԲԿԳ միջազգային նախաձեռնության անդամ >>>

ԲԿԳ Հայաստանի պաշտոնական կայքը >>>

Բաց կառավարումը հիմա >>>

ԲԿԳ հայաստանյան քաղհասարակությանը կարող եք անդամակցել ogparmenia@gmail էլեկտրոնային փոստին միանալով:

Բրիտանական դեսպանատուն Երևանում

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԲԿԳ տեղեկագիրը պատրաստվել և հրապարակվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից իրականացվող «Քաղաքացիական հասարակություն բաց և հաշվետու կառավարության համար» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը ֆինանսավորվում է Երևանում Բրիտանական դեսպանատան կողմից: Ծրագրի շրջանակներում արտահայտված կարծիքները կարող են չհամապատասխանել Բրիտանական կառավարության տեսակետներին:

© Ինֆորմացիայի ազատության կենտրոն -2014